ԱՐՁԱԳԱՆՔ

1897 Դեկտեմբեր

1898

1897 ՅՈՒՆՎԱՐԻ 1 (13) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

№. 1—ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 1

1897 ՅՈՒՆՎԱՐԻ 1 (13) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.
Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ"
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Նորվայ համարը բաղկացած է վեց երեսից

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրովի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ՛ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ
ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 ՌՈՒԲԼԻ

Օտարաշխարհից դիմել է գրէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ", իսկ արտասահմանից՝ Tiflis. Redaction du journal arménien „Ardzagang"

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

Հինգշաբթի, յունվարի 2-ին, 1897 թ.

Թիֆլիզի Ժողովարանի դահլիճում

Տեղի կ'ունենայ

ՀԱՅԶԱԿԱՒՈՐ Ռ Ե Օ Դ Ե Ր ԲՈՅՐԵՐԻ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Րօզալիա—դաշնամուր, Սոֆիա—ջութակ, Եմիլիա—վիոլոնչել։

Զատ արգինքի կէսը լինելու է յօգուտ Թիֆլիսից Ռուսաստանի սահմաններն ապաւինած գաղթականների։

Սկիզբն է $8\frac{1}{2}$ ժամին երեկոյեան։

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Տէր-Սարգսեանի թղթավաճառանոցում, իսկ կօնցերտի օրը Թիֆլիզի Ժողովարանում։

ОТКРЫТА ПОДПИСКА на 1897 г.

НА ГАЗЕТУ

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ"

(ДВАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ).

ПРОГРАММА ГАЗЕТЫ: I. Правительственныя распоряженія. II. Телеграммы собственныхъ корреспондентовъ и „Россійскаго телеграфнаго агентства". III. Статьи по внутреннимъ вопросамъ. IV. Обозрѣніе иностранной политической жизни. V. Мѣстная хроника: засѣданія думы, обществъ и желѣзно-дорожныя новости. VI. Корреспонденціи. VII. Общая хроника—внутренняя и иностранная. VIII. Фельетонъ литературный, научный, повѣсти, разсказы и др. IX. Судебная хроника. X. Смѣсь. XI. Театръ и музыка и XII. Справочный отдѣлъ.

Въ январѣ 1897 года истекаетъ десять лѣтъ со времени перехода „Тифлисскаго Листка" къ настоящему издателю. Въ теченіе десяти лѣтъ „Тифлисскій Листокъ" съ каждымъ годомъ прогресировалъ: увеличенъ форматъ газеты, введены всѣ отдѣлы литературныхъ, политическихъ и общественныхъ газетъ, расширенъ отдѣлъ корреспонденцій и руководящихъ статей по мѣстнымъ вопросамъ, съ октября же мѣсяца настоящаго года мы получаемъ ежедневно спеціальныя телеграммы изъ Петербурга, редактируемыя И. К. Василевскимъ („Буква").

Оставаясь вѣрной своей задачѣ служить интересамъ Кавказа, редакція впредь будетъ заботиться о расширеніи какъ формата газеты, такъ и отдѣловъ ея, чтобы читатели „Тифлисскаго Листка" имѣли возможность быть въ курсѣ общественной жизни нашей окраины, всей Россіи и иностранныхъ государствъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городская.		Иногородная.	
На годъ	5 р.	На годъ	7 р.
„ 6 мѣсяцевъ	3 р.	„ 6 мѣсяцевъ	3 р. 50 к.
„ 1 „	— 75 к.	„ 1 „	1 р. —

Подписка принимается исключительно въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій проспектъ, домъ № 3, въ Баку—съ 15 декабря, въ „Справочной конторѣ" на Парапетѣ. въ Батумѣ—въ газетномъ агентствѣ М. Николадзе. (3—2)

478

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հին և նորը։
Վերջին դէպքերը Թիւրքիայում։
Անգլօ-Ռուսական. ազգը քաղաքական պատերազմում.
Ռ. Եգիազարեան նամակն դէպի Կ. Պօլիս
Մի զոհ [illegible]
[illegible]

ՀԻՆԸ ԵՒ ՆՈՐԸ

Մարդիկ՝ երևի չդժնելու համար են բաժանել ժամանակի յաւիտենականութիւնը, որպէսզի իրենց կեանքը թուեն. [illegible]

[illegible]

...ծում են շատերը։ Բայց ինչ պատասխան կարող է տալ լրագիրը, երբ նա ինքը կանգնած է նոյն հարցի առաջ, երբ նա ինքը չգիտէ, թէ որտեղ փնտռէ մխիթարութեան և միշտ առաւելութիւնը—հին թէ նորի մէջ։

Անցեալ տարուան առաջին օրը քաղաքակիրթ ազգերի համար ճիշտ նոյնպէս էր լուսանում, ինչպէս ներկայ տարուան առաջին օրն է։ Նոյնը. աշխարհի խաղաղութեան յոյսեր—մարդկայնութեան յոյսեր, քրիստոնէութեան սիրոյ յաղթանակի յոյսեր, հալածեալների և տառապեալների հանգստեան յոյսեր։ Եւ այսօր երբ մեր աչքի առաջ ժամանակի այդ «տարի» անուանուած առուակը կայծակի արագութեամբ գլորվում և փախչում է մեզանից, ինչ է թողնում նա աշխարհի վրայ, որ կարող լինէր ասել, թէ հազարաւոր յոյսերից գէթ մէկն արդարացել է. ինչ է թողնում. ինչ է լուսաւորում այսօրուան ծագող արեգակը.—կրկին յոյսեր... Այո, կրկին յոյսեր, միայն թէ պատկերն է փոխուած։

Արդաւանդ դաշտերն ամայացած, արտը չորացած, այգու ծառերը տապալուած, տները աւերուած, արտասուաց գետեր, արեան լճեր և կրկին յոյս, այդ միակ մխիթարութիւնն ամեն թշուառի, այդ միակ զօրաւոր ազդիչը պապակող կեանքի։

Բայց դուք կարծում էք որ այդ աւերակոյ մոխիրների մէջ առկայծող փոքրիկ յոյսը ոչինչ է. ոչինչ է այն փոքրիկ կայծը, որ միաժամանակ լոյս և ջերմութիւն է տալիս բիւրաւոր սրտերի։ Եւ դուք կարծէ էք նրան անզգայ սառնով կոխկռտել և հանգցնել։

Ոչ, երբէք ոչ, այդ փոքրիկ լոյսը, այդ պէծը, այդ սրբազան կայծը, որ լոյս է անուանվում, դեռ նշան է կենդանութեան, որովհետև յոյսը միայն մահուան հետ է վերջանում։

Ուրեմն չպէտք է հանգցնել այդ յոյսը, որ դեռ ինքն իրան պահպանում է. այլ պէտք է մերձենալ նրան սիրով, անկեղծ զգածուած զօրովանքով, պէտք է շրջապատել անխանգ գործունէութեան հանգով, աշխատանքով, պէտք է պահպանել այն կեանքերը, որոնց մէջ դեռ մնացած չէ յոյսը, պէտք է հաստատել նրանց, թէ նրանք մոռացուած չեն, պէտք է օգնել անցկացնելու սոսկալի ճգնաժամը և այն ժամանակ յուսալու փոխարէն կարելի է հաստատուած լինել, որ մի օր անխիղճօրէն րանք իրանք կըբացագանչեն, թէ երջանիկ Նոր տարի։ Այս Նոր տարուան մենք մեր ընթերցողներին մաղթում ենք ոչ միայն յոյս, այլ և առողջ, գիտակցութիւն և թօթափման յանցաւոր անտարբերութեան։ Եւ խրախուսելը կատարէ իր պարտքը, հասարակութեան երջանկութիւնը ապահովուած կըլինի և նուիրաբերութեամբ կըհանդիպէ Նոր տարին։

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ԳՈՐԴԵԱՆ ՀԱՆԳՈՅՑԸ

Տաճկան խնդիր անուանուած Գորդեան հանգոյցի մասին՝ վերին աստիճանի հետաքրքրական է „Neue Fr. Presse"-ի աշխատակցի մի նշանաւոր դիպլօմատի հետ ունեցած խօսակցութիւնը.

«Ես չեմ կարողանում հասկանալ, ասել է նոյն պետական գործիչը—որ եւրոպական մամուլի մեծ մասը չնայելով տաճկին հարցի վերաբերմամբ իւր կրած բազմաթիւ փորձերին, այնու ամենայնիւ այդքան հաստատ հաւատ ունի թէ ռէֆօրմները կ'իրագործուին Ռուսիայի նախաձեռնութեամբ։ Սակայն ամենքի համար բոլորովին պարզ է որ ոչ Ռուսիայի և ոչ Թիւրքիայի համար դրանում ոչինչ օգուտ չկայ և երկու պետութեանց համար աւելի լաւ է որ ամեն ինչ մնայ նոյն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ որ կայ արդէն. Թէև երկուսի պատճառները լի միմեանցից բոլորովին տարբեր են։ Սկսենք Թիւրքիայից.—Այդ կողմից մամուլի նոյն իսկ այն օրգաններում, որոնց սովորաբար ճիշտ տեղեկութիւններ են ստանում, ես գտնում եմ կասկածելի ակնարկ. կարծիք սուլթանի անձի մասին։ Նրանք շատ քիչ են գնահատում սուլթանի անկախութեան զգացումը և իշխանական գիտակցութիւնը։ Ես կատարելապէս համոզուած եմ, որ սուլթանը միայն այն պատճառով է ձգտում թէ համաձայն է պետութեանց առաջարկութեան, որովհետև համոզուած է թէ դրանից ոչինչ չի դուրս գայ։ Ես կարծում եմ որ պ. Նելիդովը ոչ մի հրահանգ չի բերել իւր հետ, որ սուլթանին ստիպէ զոհ լինելու վտանգին ենթարկէր։ Ռուսաստանը Թիւրքիային պահում է այնպէս ինչպէս որ նա կայ—իւր կրպակում։ Արդեօք այդ նոյնը կըլինի, եթէ արևմտեան եւրոպական խնամակալութիւն մտցնուի, խնամակալութիւն ֆինանսական կամ քաղաքական բնաւորութեամբ—այդ աւելի քան կասկածելի է. ուստի պարզ է, որ Ռուսիան իւր շահերին հակառակ գործած կըլինէր, եթէ լրջօրէն նպաստէր և ռէֆօրմներ մտցնելուն։ Ես կարող եմ հաւատալ որ ռուսական դիպլօմատիան, դանդաղ պատճառներով ձգձգում է իբր թէ ինքը մեր կարծածի հակառակ քաղաքականութեան է հետևում. բայց ես համոզուած եմ որ եւրոպական պետութեանց Թիւրքիայի վրայ գործած ճնշման դուգահեռաբար Ռուսիայի ճնշումը կատարելապէս կեղծ է և կամ թէ Ռուսիան գործում է Պէնէլոպէի պէս, այ սինքն գաղտնապէս քանդում է այն, ինչ որ յայտնապէս շինում է։ Տաճկական քաղաքականութիւնը շատ լաւ է հասկանում գործելու այդ եղանակը և համակրում է նրան։ Դուք կարող էք համոզուած լինել, որ եթէ Թիւրքիան և Ռուսիան գաղտնապէս համաձայնուել են միմեանց հետ, այն ժամանակ մնացած պետութիւնները ոչ միայն ոչինչ չեն կարող անել, այլ նոյն իսկ չեն էլ կարող հասկանալ, թէ ինչու այդ այդպէս է։ Ռուսիան և Թիւրքիան միշտ շատ լաւ կարողացել են յաղթահարել եւրոպական քաղաքականութեան բոլոր նրբութիւնները։ Դրա դէմ ոչինչ չէ կարելի անել, որովհետև իսկապէս ոչ մի պետութիւն իրական օրինական իրաւունք չունի միջամտելու. և ամենքին շատ լաւ յայտնի է որ ոչ միայն Անգլիան, այլև ամեն մի այլ պետութիւն գործելով յանուն մարդկութեան և եւրոպական իրաւանց վերականգման տաճկական գործերին միջամտելու վերաբերմամբ՝ ամենից առաջ ի նկատի ունի իւր սեփական շահը։ Միւս կողմից Ռուսիան արդէն գտնվում է beatus possidens-ի (բախտաւոր տիրապետ) վիճակի մէջ։ Միւս պետութիւններն ամենևին ոչինչ չեն կարող յաջողեցնել առանց Ռուսիայի գործակցութեան. իսկ ընդհակառակն, Ռուսիան միշտ կարող է իրագործել իւր նպատակները, եթէ ոչ հակառակ Եւրոպայի բողոքին, գէթ առանց նրա համաձայնութիւնը կանխաւ ստանալու։

Վերջին ժամանակների անցքերը տեսնելով՝ ես անհիմն եմ գտնում այն միտքը, որ պնդում են թէ Ռուսիան ներկայ րոպէին բաւականաչափ զօրք չի հանել Բօսֆօրի ափը, սուլթանին դաշնագիր չի առաջարկել Թիւրքիայի անձեռնմխելիութեան վերաբերմամբ և այդպիսով նրան կապելով Սև ծովի կողմից հանգիստ նստած չի սպասել, թէ Անգլիան ինչ կ'անէ այդ կատարուած փաստի դէմ։ Ես անհաւանական եմ համարում, որ Անգլիան այդ պատճառով պատերազմ յայտարարէ Ռուսիային։ Անցել են այն ժամանակները, երբ Անգլիան կարող էր յարձակուել Ռուսիայի վրայ. Նրան պաշտպանութիւն չի ցոյց տալ ոչ Աւստրիան ոչ Իտալիան։ Միշտ է մի տեսակ համաձայնութիւն կայ անգլիական և աւստրիական քաղաքականութեանց մէջ Ռուսիայի դէմ, արևելեան հարցում, սակայն ինձ թւում է որ այդ քաղաքականութեան հետևանքները կըշատւէին Ռուսիայի և Աւստրիայի մէջ կանխաւ կայացած համաձայնութեամբ, հակառակ անգլիական շահերի։ Իսկ Իտալիան—չնայելով որ նա այդ ուղղութեամբ է—Ռուսիայի հետ համաձայնութիւն է կայացրած, որով Հռոմի դիպլօմատիան խոստացել է չխառնուել Ռուսիայի գնիքին։ Կ. Պօլիսը, այն պայմանով որ կանոնաւոր բարեկամութիւններ առաջ գալու դէպքում Ռուսիան ևս կըպաշտպանէ Իտալիայի Փարիզի դիպլօմատիայի առաջ։ Իսկ երբ այս գրութիւնն ի նկատի ունենալով, մի առանձին հետաքրքրութիւն և հարկաւորութիւն չէ հարկաւոր Ռուսաստանին հարկադրելու որ նա Թիւրքիան պահպանէ իւր այժմեան վիճակի մէջ. Իսկ Թիւրքիան չէ կամենում աշխատել ռէֆօրմներն իրագործելու իւր ներքին քաղաքականութեան պահանջած պատճառներով։

Օտարերկրեայ իշխանութեան միջամտումն Թիւրքիայի պէս տարօրինակ և բազմազան ժողովուրդ ունեցող երկրի գործերի մէջ—միշտ վտանգաւոր է։ Մի լրագիր վերջերս ասաց, որ եթէ Թիւրքիան ձգտումնապէս ցանկանար ռէֆօրմներ մտցնել, դրանով նա ոչ միայն կըզրկուէր իւր հեղինակութիւնից նպատակների աչքում, այլ և կըզրկուէր դրանով մահմեդականների մեծամասնութեան և ստեղծելու դէպի քրիստոնեաները, որոնց կեանքը և կայքը (եւ ինչ է մնացել որ) մեծ վտանգի կարող էին ենթարկուել ամբողջ Արևելքում։ Դա շատ ծանրակշիռ հիմք է, որի հետ ես կատարելապէս համաձայն եմ»։

ՌՈՒՍ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐ ՎԱՆՈՒՄ

«Ռուսկիյա Վեդ.» լրագրին գրում են Վանից դեկտեմբերի 2-ից. «Չորս օր առաջ մենք հասանք Վան։ Բայազետից մինչև Վան ուղևորական երեք օրուան փոխարէն՝ հարկ եղաւ կորցնել 7 օր, որովհետև բոլոր սովորական ճանապարհները ծածկուած էին խոր ձիւնով և մենք ստիպուած էինք անցնել գէթ պարսկական սահմանը և փոխանակ մի կիրճ, որով կարող լինէինք դուրս գալ դէպի Վան տանող մեծ ճանապարհը։ Վայը ուղեկցում էին Բեկիրը, թէև մեզ նախազգուշացնում էին որ մեծ դժուարութեանց պիտի հանդիպենք։ Տաճիկ պաշտօնեաները մեզ հանդիպում են մեծ քաղաքավարութեամբ և միևնոյն ժամանակ մեծ անվստահութեամբ։ Ոչ որ չէ հաւատում այստեղ թէ ես եկել եմ գիտական նպատակներով. դեռ վերջնականապէս չեն մեռել թէ, արդեօք մենք գիտնական չենք, թէ մարդիկ, որոնք եկել են այստեղ պաշտօնապէս քննելու և հետազօտելու։ Այդ վերջին ժամանակներս տաճիկ պաշտօնեաներն անխափան չեն սպասվում։ Մարդ ինչ նպատակով էլ ուզում է գալ այս երկիրը, այս սարսափների հետերը, որոնք այստեղ կատարուել են, մտածել ընդհանուր զգացումն պիտանի և այստեղ խաղաղեցում «խաղաղացման» պաշտօնական կոմեդիան—այդ ամենը առաջին անգամ մարդուն հետաքրքրում են այս երկրում բաղադրեան տեսակէտից։ Ներկայումս, ճիշտ է, տիրում է ժամանակաւոր հանգստութիւն, անկանոն իշխանութիւնները և քրդերն իրանք ևս զգում են որ չափն անցել են. անմարդի խոյեր և Ռուսաստանի վրա բեմատութեան—Ռուսաստանի և ոչ Եւրոպայի—երկիւղը նկատելի ամենքի վրայ։ Դրան աւելանում է և այն հանգամանքը, որ հայերն այն ամ-

...տեսանի կողոպտուած են, որ այլ ևս նրանցից տանելու ոչինչ չկայ։ Սակայն սահմանակից կրքերը, գլուխեան քաղցկեղը համար որևէ միջոցի բացակայութիւնը, անպատիժ մնալու համոզման ու տեղական մանրախնդութեան հետ միացած հնարաւոր են դարձնում կարծել որ շատ շուտով կոտորածները կըկրկնուին։ Մենք են այն պայմանները, որոնք եկել են մեր ճանապարհորդութեան դեռ առաջին օրերում... Անցնում եմ երկու խօսք. այստեղի հէնտուկատոսի Կարապետ Չանիքարեանը, որ հետապնդման պաշտօն էր վարում նրա բացակայութեան ժամանակ, յանկախ կոտորածի ցոյց տուաւ մեծ քաջութիւն և անձնուրացութիւն—ինչպէս պատմեցին ինձ բոլոր անողները։ Նա ազատել է մինչև 6000 հայեր, հիւրընկալելով նրանց հիւպատոսարանում և իւր եռանդուն միջամտութեամբ հեռացրեց 500 հոգուց բաղկացած քրդերի մի խումբ, որ յարձակուել էր հայկական թաղերից մէկի վրայ»։

ԻՐԵՆՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

„St. James Gaz."-ին հաղորդում են Կ. Պօլսից, — Այս օրերս այստեղ գինարանում սկսի ունեցան [illegible] յայտնի ցոյցեր։ Մօտ 1700 նաւաստիներ պահանջում էին իրանց չվճարուած ռոճիկը։ Մի քանի ժամանակից յետոյ նրանք ստացան իրանց ռոճկի մի մասը, բայց և իրանց նաւերում ուղարկուեցին [illegible] [illegible], ուր նրանց փոքրիկ խմբերով ցամաք հանեցին։

Կ. Պօլսից իրանց հայրենիք ուղարկուած բիւրք հեծելազօր գնդերին սուլթանի մասնաւոր դրամարկղից վճարուեցան 9000 ֆ. ստերլինգ։ Զօրքերի տարւան ներկայ եղանակին ճանապարհ գնալը դանդաղ տառապանք և [illegible] [illegible], թէ նրանց հեռացնում են առանձին պատճառով։

ԶՈՐ ՑՈՅՑԸ

„Petit Journal"-ը թէև հաւանաւորութիւն է տալիս Ֆրանսիայի և Ռուսաստանի հասարակական ջանքերին հիւանդ, հաղի աարերի վրայ կանգնել կարողացող Դրան օգնելու մասին, բայց ամենևին անմտութիւն է համարում Տաճկաստանի ապագային հաւատալ. Եւրոպային խաղաղութիւնը որ ներկայումս կայ, կարող է մարդկանց միայն նրանց, որոնք ամենևին ծանօթ չեն Տաճկաստանի քաղաքական վիճակին. խոստումները մտնել ապացուցած կըլինկազանք նոյն իսկ ամենաթօթ և մեծ անհեռատեսներին։ Օսմանեան կայսրութեան վերջնական քայքայումը յետաձգելու համար, հարկաւոր է զօրացնել նաւատորմիղը, բայց այս միջոցն էլ օգուտ չի տայ, եթէ տաճիկ կառավարութիւնը առանց յետաձգութեան ձեռնամուխ չի լինի ռէֆօրմների իրագործման։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՐԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

„Daily News"-ի Հռոմի թղթակիցը գրում է հետևեալը.

Պապն ընդունեց գնալ [illegible] պատմական մարմնի այցելուներին, նոր տարուայ առթիւ։ Նա խօսեց արևելեան խնդրի մասին։ Նա բաւական խօսելով Ֆրանսիական գնդակի հետ արևելեան հարցի մասին, պնդելով թէ, մանաւանդ Ֆրանսիան կոչուած է պաշտպանել արևելքի քրիստոնեաներին օսմանեան զօրանութիւնից։ Եւ Ֆրանսիան ա-

առանձնապէս արևելքի կաթոլիկների վրայ հովանաւորութեան իրաւունք ունի, և պէտք է աշխատել մի այնպիսի գիրք ձեռք բերել, որով կարող լինի արգելել ամեն ջանք, որ կղզաքի կաթոլիկ միսիոնարների և հաստատութիւնների ազատութիւնն ու ապահովութիւնը խանգարելու։

—

ԽՕՍՔ ԵՒ ԳՈՐԾ

Կ. Պօլից «Օգեւոսկի Լիտուկի»-ին ի միջի այլոց գրում են հետեւեալը.

Հայոց պատրիարք Օրմանեան վերջին շաբաթ օր Բ. Դուռում երկար խօսակցութիւն ունեցաւ մեծ վէզիրի հետ։ Այդ խօսակցութիւնը վերաբերում էր հայերին շնորհուած ընդհանուր ներման։ Բանից դուրս է գալիս, որ այն յոյսերը, որ հայ ժողովուրդը դրել էր այդ «ընդհանուր» ներման վրայ, չեն արդարանում, և թէ այս դէպքում Թիւրք կառավարութիւնը խօստացողի և իր խօստումը երբէք չկատարողի մեծ դերն է խաղացել։ Ցարդ ազատ արձակուել են ընդամենը միայն 36 հայ, այն էլ այնպիսիները, որոնք ոչինչով մասնակից չեն եղել վերջին դէպքերին, այն ինչ Կ. Պօլի բոլոր բանտերը լիքն են հայ ապստամբներով, կասկածելիներով, կանանցով և մինչև անգամ երեխաներով, որոնց մեծ մասը ոչ մի յանցանք չունի։ Թիւրք ատենական իշխանութիւնները հայոց բանտերից ազատելու տեղ մեծ դժուարութիւններ և ձախողութիւններ են դնում։ Այսպէս, արձակուողի ոչ միայն յանցանքն են հանում և անունը մասնաւոր գրքի մէջ արձանագրում, այլ պարտաւորեցնում են նրան ամեն օր ներկայանալ ոստիկանատուն և հաշիւ տալ, թէ ինչ է արել ամբողջ օրուան ընթացքում։ Բացի դրանից, նրանցից ստացուած պարտաւորում է ամենակարճ ժամանակում որ և է պարապմունք ճարել իր համար. ապա թէ ոչ նա հաւանականաբար նորից կենթարկուի թիւրքական բանտի բոլոր սարսափներին։ Ահա բոլոր այս կէտերի մասին էր, որ Օրմանեանը խօսեց վերջին շաբաթ օր Խալիլ-Րիֆաթ փաշայի հետ, խնդրելով դրանից հոգալ, որ աւելի արագ հրահանգներ տրուին հայերին բանտերից շուտափոյթ ազատելու համար։

—

ԱՆԳԼՕ-ՍԱՔՍՕՆԱԿԱՆ ԱԶԳԻ ՔԱՂԱ-ՔԱԿԱՆ ԱՌԱՋԴԻՄՈՒՄ

Դարիս սկզբին (1801 թ.) աշխարհիս երեսին խօսում էին.

Անգլիերէն . . . 22 միլիոն մարդ
Իտալերէն . . . 18 » »
Ռուսերէն . . . 30 » »
Սպաներէն . . . 32 » »
Ֆրանսերէն . . . 34 » »
Գերմաներէն . . . 38 » »

Ուրեմն 19-րդ դարու սկզբին ի տարերէնից յետոյ ամենից քիչ տարածուած լեզուն անգլիականն էր։

Անցնում է ընդամենը 70 տարի և նայեցէք, թէ պատկերը ինչպէս փոխուած է։ 1870 թ. աշխարհիս երեսին խօսում էին.

Անգլիերէն . . . 90 միլիոն մարդ
Գերմաներէն . . . 66 » »
Ռուսերէն . . . 63 » »
Ֆրանսերէն . . . 46 » »
Սպաներէն . . . 44 » »
Իտալերէն . . . 30 » »

Ուրեմն անգլիերէն խօսողների թիւը 70 տարուան ընթացքում աճել է 310%, կամ նախամերձերից առաջին տեղն է բռնել և մօտ 3 անգամ աւելի տարածուել, քան ռուսերէնը, մօտ 4½ անգամ աւելի քան գերմաներէնը, մօտ [illegible] անգամ աւելի, քան ֆրանսերէնը և սպաներէնը, և մօտ հինգ անգամ աւելի քան իտալերէնը *)։

Ամենից առաջ հարց է ծագում, թէ ինչ միջոցներով անգլիական ազգը հասաւ այդպիսի զարմանալի յաջողակ հետեւանքների և մի բանի անգամ գերազանցեց միւս բոլոր ազգերին։ Բնական աճումի՞ց. բայց անգլիական ազգի բնական աճումը գերմանականից և ռուսականից բարձր չէ, այլ գրեթէ հաւասար է առաջիններին և սոսր երկրորդից։

Բայանի է, որ անգլիական ազգը դարու ընթացքում մեծամեծ գաղութներ է հաստատել աշխարհիս ամենահեռաւոր և մերձաւոր երկրներում։ Այդ գաղթականական արշաւանքները եղել են թէ արդիւնաբերական և քաղաքակրթական և երբէք քաղաքական, այսինքն ոչ մի տեղ Անգլիան ոչ մի վայրում բանի չէ փաթաթել ոչ ի իր լեզուն, ոչ էլ իր հասարակական և քաղաքական հիմնարկութիւնները։ Ընդհակառակը՝ գրեթէ ոչինչ արհեստական միջոցներ նա չէ գործ դրել անգլիական լեզուն, կրօնը և հասարակական հիմնարկութիւնները տարածելու համար, նոյն իսկ բարձր թոյլ է արել այդ խնդիրները, չէ էլ գրաւել դրանցով, իր վաճառականական և արդիւնաբերական շահերն ի նկատի ունենալով։

Ուրեմն ինչումն է այդ գաղտնիքը. ինչու, օրինակ, Ֆրանսիան ապա-

*) Այդ թուերը քաղուած են Մէյնհօլի «Աշխարհի յառաջադիմութիւնը XIX-րդ դարում» աշխատութիւնից։ Ծ. Ց.

քան տարի Եգիպտոս իր տիրապետութիւնը հաստատելուց յետոյ իր լեզուն, իր հիմնարկութիւնները չէ կարող տարածել։ Հակառակ նրա գործ դրած բոլոր միջոցներին, այսօր էլ առաջին է նա այնտեղ, և ֆրանսիացին ու բանւոր կեղեքիչը նոյնպէս։ Իսկ Անգլիան առանց բանի միջոցներ գործ դնելու հասել է այնպիսի շօշափելի հետեւանքների, որ չէ կարող իրան ներկայացնել և ոչ մի ֆրանսիական և բելգիական իմաստ։

Նախ՝ Ֆրանսիան յաճախ իր ատենին իր երկարակեցութեամբ ազատ ալ. մեծ մասամբ բանակայ ահաբեկ միջոցներ տակ է եղել (Առաջին Նապոլէոն, որա տապալումից յետոյ Բուրբոնեան յետադիմական վարչութիւն մինչև յուլիսեան յեղափոխութիւնը, յետոյ էլ Օրլէանեան տան անդամ տիրապետութիւնը և վերջապէս Նապոլէոն III-ի բռնապետութիւնը)։ Երկրորդ՝ իր տանն ազատ ուր ֆրանսիացին սարսափելի բռնաւոր է հանդիպողներին ուրիշ երկրներում։ Եւ այդ նոյն շատ քիչ փոփոխուած երրորդ հանրապետութեան Ֆրանսիան նոյն միջոցները գործ է դնում այսօր Մադագասկարում, Տօնկինում և այլ երկրներում, որ սրով է նուաճում և ուժով պահում իր ձեռքում։ Մինչև անգամ իր երկրում տարածելի բանաւոր է եղել Ֆրանսիան օտարների վերաբերմամբ։ Յիշում էք, ընթերցող, ինչպէս ֆրանսիական կառավարութիւնը անցեալ տարի արգելեց Փարիզում մի տաճկական այնպէս թերթի հրատարակութիւնը, յայտնելով նրա խմբագրին, որ սուլթանի խնդիրով է խափանվում լրագիրը։ Իսկ երբ թերթի խմբագիրը յիշեցրեց ֆրանսիական օրէնքները, նրան հրամայեցին և 24 ժամուա ընթացքում հեռանալ Ֆրանսիայից, այն Ֆրանսիայից, ուր օրէնքով մամուլն ազատ է։

Բոլորովին այլ ձևով է վարւում Անգլիան։ Գաղթականութիւն հաստատելով մի երկրում, նա ամենից առաջ հիմնում է իր մայրենի երկրի հիմնարկութիւնները, լայն ինքնավարութիւն, անձնական և ինքնուրոյն զարգացման ազատութիւն, կրօնի, խօսքի և կարծիքի ազատութիւն և այն ամեն բարիքը, առանց որոնց անգլիացին չէ կարող ապրել։

Այդ հիմնարկութիւնների բարիքը հասարակապէս վայելում են թէ անգլիացին, թէ բնիկը։ Իսկ վերջինը տեսնելով սրբելի լաւ և օգտակարը, իր յօժար կամքով ընդունում է նրանց, խորացնում և յառաջադիմում։

Ահա հէնց այդպիսի յարաբերութեան, որ իրենց ազգերն իրանց համար օգտակար են համարում սովորել անգլիերէն, ուսումնարաններ բանալ և առանց սոփման անգլիերէն գտա տալ իրանց ուսումնարաններում մայրենի լեզուի հետ հաւասար։

Բայց ոչ ազգը կլանուած այնպիսի բարիքներից, ինչպէս է սովորել անգլիերէն լեզու, խորացնել անգլիական հասարակական և քաղաքական հիմնարկութիւնները, հաստատել դրանց իր հայրենիքում և վայելել դրանց մատուցած բարիքը։ Իսկ այդ բոլորը խորացնելուց յետոյ անգլիահպատակ «ազգը, պէտք է ի բնիկ» որով մնում են անգլիացու հետ և կորցնում այն նիւթին հոգեբանական կամքը, որ Ռընանի կարծիքով հիմնականն ներգոյ է ազգայնութեան գաղափարի։ Դրանից յետոյ գոյութիւն է ստանում մի նշանաւոր երևոյթ. տարբեր «ազգը», պէտք է լինելը, ամենքին չկորցնելով իրանց ցեղական առանձնայատկութիւնները, կազմում են հասարակական կամք, մի նոր բարձրագոյն հոգեբանական ազգայնութիւն, իսկ և իսկ այն յատկութիւնը, որի նշանակութիւնը գեղեցիկ կերպով բացատրում է Ռընանի Qu'est ce que la nation (ինչ է ազգը) նշանաւոր ճառում։

Անգլիացին միշտ մտածում է բարիք անել իրան և ուրիշներին, օգտուել լինել իրան և ուրիշներին։ Սակայն ուրիշները նրա կարծիքով իր առաջարկած բարիքը և օգուտը յօժար կամքով պիտի ընդունեն և մերժեն, որովհետև օգուտն ու բարին ոչինչ անոյշութիւն չունին բռնութեամբ և կոյր ուժի հետ։ Ուստի բոլորովին արդարացի են Մակօլէի հետեւեալ խօսքերը։

«Անգլիայի ամբողջ պատմութիւնը միայնում է լուսաւորութեան և ազատութեան բարի ազդեցութիւնը և դրանից օգտուող անգլիացին նոյն բարիքը պիտի բաշխէ միւսներին»։

Սխալւում են արդեօք անգլիացիք այդ միջոցների ընտրութեան մէջ։ Մեր փոքր առաջ բերած թուանշաններից երևում է, որ անգլիացիք չեն սխալւում, այլ ուղիղ ճանապարհով են ընթանում իրանց լեզուն և քաղաքակրթութիւնը տարածելու գործում և ապագան նրանց է պատկանում. իսկ սխալւում են նրանք, որոնք կարծում են, թէ կոյր ուժը և բռնութիւնը ընդունակ են բարիք և օգուտ տարածել։

N. N.

—

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՆԻՒԹԱ-ԿԱՆ ՎԻՃԱԿԸ

—

Երբ հիմնուեց Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը, արդեօք ապահովուած էր նրա նիւթական վիճակը, թէ Մայր Աթոռի ընդհանուր եկամուտի ներքների յոյսով բացուեց այդ հաստատութիւնը։ Ահա մի հարց, որ վերջին ժամանակ ի զարմանս ամեն մի բանիմաց հայի վիճաբանութեան նիւթ է դառել Էջմիածնի գիտակցական շրջաններում։

Արդ՝ ամբողջ հայ ազգը գիտէ, որ Գէորգ IV Կաթողիկոսը երկար տարիների ընթացքում, զարմանալի տոկունութեամբ, ամեն բամբասանք արհամարհելով, նախապատրաստեց մասնաւորապէս ճեմարանի անունով մի յատուկ դրամագլուխ և ապա թէ բացեց ճեմարանը։ Ով չգիտէ, որ երջանկայիշատակ կաթողիկոսը մեծ գնով ճաշոցներ և ձայնագրեր չարականներ վաճառել տալով եկեղեցիների վրայ միմիայն ճեմարանի անունով, և այդ կերպ գոյացրեց 60 հազար ռուբլու ճեմարանի դրամագլուխ։

Ով չէ յիշում եօթանասնական թուերից սկսած «Արարատ» ամսագրում շարունակ հրատարակվում էին յանուն ճեմարանի ժողովրդական նուիրատւութիւնների անուանական ցանկը և գումարները։ Ում յայտնի չէ, որ ճեմարանի հիմնադիրը յառաջ քան այդ հաստատութեան նախ՝ Հնդկաստանից եկած Գէորգ ազա Մանուկեանի կտակով 51 հազար ռուբլին, երկրորդ՝ Աստրախանի հայ եկեղեցու տեղի վաճառումից մեծ գումարով գոյացած 43 հազար ռուբլին, երրորդ՝ Համադանեան Աղայքարեան ուսումնարանից մնացած գումարը։

Ծառայելին յայտնի է, թէ 1878 թ. Բարձրագոյն Կաթողիկոսը կառավարութիւնից իրաւունք խնդրեց ճեմարանական գումարով այդ հաստատութեան համար հողեր հայթայթել մեծ կալուածքներ գնել և ապա այդ գումարի հաշուից անմռութեան Եզի վիճը։ Ով չգիտէ, որ եղել է առանձին մատեան ճեմարանական գումարների և նոյն իսկ առանձին արկղ, որ միշտ կնքւում էր կաթողիկոսական կնքով։ Վերջապէս՝ ստուգուած էր, որ Գէորգ IV կաթողիկոսի մահուանից յետոյ ճեմարանական գումարների ընդհանրութիւնը հասնում էր 300 հազար ռուբլու։

Խաղաղի այս գիտցածին, այս անհրաժեշտ և անհերքելի փաստերին այսօր Ս. Էջմիածնում մի քանի անձինք ներկայում են մի այլ կերպարանք տալ. դրանք աշխատում են այժմեան Վեհափառ Կաթողիկոսին խնդիրը ներկայացնել այնպէս, իբր թէ ճեմարանը իրան առանձին դրամագլուխ չէ ունեցած, այլ այդ ամենը՝ Ս. Աթոռին եկած նուէրներն են եղել։ Դրանց կարծիքով, քանի որ ճեմարանը Ս. Աթոռի հաստատութիւններից մեկն է, ապա ուրեմն՝ նրա դրամագլուխը Վանքի գումարներից զատել աւելորդ է. ի հարկէ, այդպիսի մեկնութիւններով գիւղին կլլեն արդարացնել տնտեսական միջոցին սխալ ձեռնարկութիւնները ճեմարանական գումարներին, իսկ թէ Վանքի կարիքը պէտքերը հոգալու համար. . .

Սակայն հայ հասարակութիւնը պէտք է իր յոյսը դնէ մեր Վեհափառ Հայրիկի իմաստութեան վրայ, որ հագի թէ Իւր օրով թոյլ տայ ճեմարանական դրամագլուխ և նրա հաշիւը միացնել վանքական գումարներին ու հաշիւներին։ Այդ կնշանակէր՝ խախտել Իւր հեռատես Նախորդի նուիրական կամքը. զրկել մեր հոգևոր միակ բարձր հաստատութիւնը իր գոյութեան գլխաւոր հիմնադրամից և ապագայի անմխիթար վիճակ պատրաստել այդ հաստատութեան համար. . .

Թող Ս. Էջմիածնի Միաբանութիւնը՝ փոխանակ ճեմարանական յատուկ գումարներով Վանքի գանձարանի այժմեան պակասութիւնը պահպանել ջանալու, ամեն հոգս յանձն առնի Վանքի եկամուտներ իր կանոնաւոր և լաւ տնտեսելու։ Այժմ այլևս շատերի համար գաղտնիք չէ, որ Վանքի ընդհանուր եկամուտի գումարից Վանքին է մնում միմիայն կէսը, իսկ միւս կէսը գրկում են «ծակ պահ պատասխանատուութեան կալուածոց»։ Ահա թէ որտեղ են պէտք հասցնել և փաթաշան տնտեսները...

Բ.

—

ՊԱՆԴԽՏԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ

—

«Կորանք, տանի կարօտ, ... արձակէ ձայնը,
«Կոտանք, մեր աշխարհէն հեռացեալ մը չունիմ»...

Նոր տարի է այսօր...

Կարծես թէ ամենքն ուրախ են։ Ամենքի բերնից թռչում են սովորական խօսքերը՝ «շնորհաւոր Նոր տարի և բարի կաղանդ»։ Ամենքը հաւաքուած ընտանեկան բազմը յարկի տակ, խօսում են իրար հետ, նոր-նոր ծրագիրներ են կազմում, նոր յոյսեր տածում նոր տարուան հա-

—

ՖԵԼԻԵՏՕՆ

ՄԻՍՍՕԼՕՆԳԻ

(Մի էջ Յունաստանի ազատութեան պատմութիւնից)

—

...Եօթանասուն երկու տարի է անցել այն օրից։

1823 թուականի դեկտեմբերի 31-ն էր, Նոր տարւայ նախօրեակի գիշերը։ Ամբողջ Յունաստանում տիրում էր սուգ և յուսահատութիւն։ Ուժասպառ եղած ժողովրդի մնացորդը քաղաքներում կիսաւեր տների մէջ ապաւինած պաշտպանւում էր ջղաձգական բնի մէջ, ամեն վայրկեան երազելով ենիչերիների յարձակումը, կանանց և աղջկանց առևանգումն, մանկանց կոտորածը, տների հրդեհումն։

Հերքուլէսի և Ողիմպոսի հայրենիքը յաղթուել էր անհաւասար կռուից մահացու արշաւանքի հեղեղի դէմ, որ առ բինելուցայ էր արել մի ժամանակ ազատ հայրենիք և գիտութեան սրբութեան երկիրը։ Եկեղեցարանների և այլ քաղաքների բլուրների վրայ բարձր ձողերի գլխին ծածանւում էր տաճկական դրօշակը իր կիսալուսնով և աստղով. իսկ յունական կարմրաս խաչակիր դրօշակների կտորտանքը կարելի էր գտնել միայն տաճկական զինանոցների պարտէզների պատերին կպցրած իբրև նուաստի և ծաղր յաղթահարուած և գերուած ժողովրդի վրայ։ Ամէնքը հեծում էր կուսակցութեանց երկպառակութիւնից և իր յանցաւոր անգործութեամբ ու կարեկցում վիճակով յուսահատութեան էր սփռում ամբողջ երկրի բնակիչների վրայ, որոնց մէջ դեռ հայրենիքի ազատութեան համար մեռնելու վերջին քաջութիւնը և ցանկութիւնը կենդանի էր մնացած։ Դա մի շարադրաչափ նինջ էր, յուսահատական քայլի նախահանգիստ։ Դա տագնապ էր կեանքի և մահուան։ Յունաստանն սկսում էր կորցնել իր յոյսը և զգում էր որ ստիպուած պիտի լինի վերջին յուսահատական քայլն անել։ Ահա այդ քայլին նախապատրաստուելով նա կանխուած էր հագել, հաստատ վճռելով թէ որքան դանակներ պիտի դնէ ենիչերիների սրտին, առանց բռնատիրեայ աշխարհի պաշտպանութեան յոյսն ու ինքնալու։ Սև էր հագել ամբողջ Յունաստանը։ Դառնացած էր համարւում՝ ով իրան թոյլ կտար նոր տարին հանդիպելու պատրաստուել։ Ննջում էր Յունաստանը նոր տարուան նախօրեակին տառապանքի երկնքի տակ և ոչ մի տան պատուհանում չէր փայլում ճրագի լոյսը։

Սակայն այդ ընդհանուր սուգին անմասն էր Միսսօլօնգին, արևմտեան Յունաստանի, Յոնիական ծովափի այդ փոքրիկ բերդաքաղաքը, որի տների պատերը դեռ նոր էին կարկատուած տաճկական ռումբերի պատճառած աւերումներից։ Կէս գիշերին յանկարծ բոլոր տների պատուհանները լուսավառուեցին։ Միսսօլօնգիի նեղ և խոնաւ փողոցներում վազվզում էին կոչնակները և տների դռներից առաջ բարձրաձայն գոչում. «պատրաստուեցէք, գալիս է»։ Մի ժամուան ընթացքում ապա և խաւարի մէջ ընկղմած փոքրիկ քաղաքը հարսանեաց տօնի կերպարանք առաւ. բոլոր տներից միմեանց ետևից դուրս էին թափւում բնակիչները և վազում դէպի ծովափը, խորտակելու կրկնակ ձեռքերին բացուածը ջահերը։ Մի քանի վայրկեանում ծովափը կարծես հրդեհ էր ընկած և հազարաւոր ջահերից բարձրացած թանձր մուխը տարածւում էր դէպի ծովը աւելի սալիկ ծովից փչող հովին։ Հազարաւոր ջահերի փայլուն լոյսը ցոլանում պէս լուսաւորում էր ծովափի ամբողջ հորիզոնը, որին մասնակցում էր ամբողջ Միսսօլօնգին՝ սկսած հալեւոր ծերունուց մինչև մօր գրկում գտնուող նորածին մանուկը։ Տղամարդական Վեներայի տիպար սքանչելի յոյնուհիք այդ օրը հանել էին պահարաններից իրանց ոսկեթել ասեղնագործ զգեստները, որոնց մէջ արտափայլում էին հազարաւոր ճրագների կայծերը, իսկ նրանց սև աչքերի կրակը մրցում էր աստղերի փայլի հետ։ Ոչ մի օր համեստ յոյնուհին չէր փայլել այն գեղեցկութիւնը, ինչ որ փայլում էր նա այդ ժամին։ Չնայելով ձմերային ցրտին, նրանք վազել էին ծովափ գլխա-բաց և քամին շոյում էր նրանց խիտ, փափուկ և սաթի նման սև մազերը՝ գուրգուրելով նրանց խոպոպները, որոնք իջնում էին ճակատի վրայ պաճաճ իբրև թանձր փարագոյր մարմարեայ տախտակների վրայ։ Ծովափը գնալով աւելի և աւելի լցւում էր ժողովրդով և դրանց առաջացրած աղմուկը խլացնում էր պատերին զարկուող և փշրուող ծովի ալիքների աղաղակը։ Հազարաւոր ջահերի լոյսը մի կողմից արտափայլելով ծովի ալիքների միլիօնաւոր փշրանքների մէջ, նրանց հետ իբրև փառաւոր աստղի կտորներ, բարձրանում էր օդի մէջ և կրկին այդ փշրանքների հետ միասին կոյս գնում ծովի անդունդը։ Միւս կողմից ամբոխի մէջքի հետ լուսաւորում էր Միսսօլօնգիի բերդի փշրուած պատերը և վիրաւորուած պատերը. Իսկ բերդի գլխին՝ մի տարուց ի վեր խաւարած փարոսը այդ ժամին արձակում էր իր ճաճանչները դէպի Յոնիական ծովը իր կանաչ, կարմիր և արևագոյն լոյսով բարձրացնելով ջահերի հրդեհման լոյսի հետ։

Ժամը գիշերուայ երկուքին լսուեց ձիերի արշաւանք և մարդկանց շարժումից առաջացած դէպերի շաշիւնը և քանի վայրկեանից բերդի առաջին կամրջայ դռները բացուեցին և այնտեղից դուրս եկան Միսսօլօնգիում կենդանի մնացած յոյն զինուորները և կամաւորները իշխան Մավրոկորդատոսի առաջնորդութեամբ, որ նահանգապետ էր արևմտեան Յունաստանի և իր հայրենիքի ամենաքաջ զօրավարը։ Ջահերկալը փայլում էր նրանց զէնքերի և կուռանց ու կանանց ոսկեթելաւոր տախտակները, թնդացնում էր օդը, աւերակներով պատուած քաղաքը, այդ գիշերը աւելի ջերմանում էր յուսով։

Մի մթնշաղի հեռաւորութեան վրայ կանգնած տաճկական նաւը, որ առանց նախապատրաստուելու է երկու օրից յետոյ յարձակումն գործ և վերջ նակատուած պաշարել Միսսօլօնգին, շրջափակութեան մէջ ընկած այլեւս այդ անօգուտ հրդեհը փոքրիկ գազազանքի ազատ։ Նաւաստիները, որ պատմութիւնից գիտակութիւնն ունէր հին յունական զիգի մասին, վճռեց որ այդ կրակը նոր գտնուած է հրամայից նաւաստիներին աւելի յ բաշուել դէպի ծովի խորքը և պատասխան մնալ փախչելու։

Սակայն ... էին սպասում Միսսօլօնգցիք։

—

Այդ ժամին Յոնիական ծովի մէջ յամաքից առանձնացած ճիշտ Միսսօլօնգի բերդի դէմ գտնուող Կեֆալօնիա կղզու վրայ Մետօկսատ անուանուած փոքրիկ գիւղի մի փոքրիկ բայց գողտրիկ գիւղակի պատշգամբում միայնակ կանգնած էր մէկը, աչքերն անշարժ յառած դէպի Յոնիական ծովի խորքը, որտեղից միմիանց ետևից թռչող ոսկի օղակները ցոյց էին տալիս լուսնի մօտալուտ երևումը։ Ծառազարդից դալուկ հրային ահագին ափսէն փայլեց ջրի հորիզոնում և նրա կաթնային լոյսն ընկաւ պատշգամբում միայնակ կանգնած երիտասարդի երեսին, որի դալուկ այտերի վրայ վառւում էր մի ջղային կարմրութիւն, կապոյտ աչքերը յառած էին դէպի ծովը և ցանցառ խաղաղները չէին ընկճում ու չէին կտրում հազմի հարուածներից։ Դա պօէտն էր, հանճարը, աստուածների, ոգիների, ծովերի, բնութեան, գեղեցկութեան հրամանատարը, իր ժամանակի ամենամեծ պօէտը, որի ոգին և մտքի թռիչքը տիրապետում էին ամբողջ տիեզերքի վրայ, որին հնազանդւում էին երկնքի հրեշտակները և դժոխքի դևերը, որոտումը և զեփիւռը, կայծակը և զօրը։

Դալուկ էր նա, յոգնած. Նրա ոգին յաղթել էր իր թռիչքը բանաստեղծութեան աշխարհում, նա լի էր գառաժամ դէպի մարդը, որովհետև մարդոյն ատելով և մարդկութիւնը սիրելով նա կրկին վայելել էր միայն միզանթրոպ-մարդատեաց անունը։ Նոյն իսկ յունական հրոյ մէջ այրուող մերժուած ոգիները դժոխքից հանելով և նրանց սրտի մէջ նորից բորբոքելով ճշմարտութեան աստուածային կրակը, նա այնուամենայնիւ ազէտ ամբոխի աչքում դեռ մի նշկել էր աստուածութեան հակառակ։ Նա իջել էր իդէալական աշխարհից, թողել էր գրչի և երևակայութեան աշխարհը, այժմ իր կեանքը, իր մարմինն էր զոհ բերում մարդու ազատութեան։ Թողել էր իր հայրենիքն իսկ և Յոնիական ծովն էր հասել Յունաստանի ազատութեան զոհ բերելու իր անձը։

Նա զանվում էր մի ժամ առաջ իր ազնիւ ընկերի խօսակցութեան թարմ տպաւորութեան տակ, երբ նա ասում էր դրան թէ—«դու իրաւունք չունիս քո անձը զոհել, մեռնելու քո հանճարը, որ քեզ չէ պատկանում, այլ ամբողջ մարդկութեան։

—Հանճար, մտածում էր նա դա է, այո, իմ երջանկութիւնս. բայց ինչ աւելի մեծ երջանկութիւն կլինի քան այն, երբ ես զգում իմ այս վարկեանին, անանելով որ իմ կեանքով պիտի փրկուի մի ամբողջ ազգի կեանք, միլիոնաւոր կեանքեր։ Ի՞նչ աւելի մեծ ու բարձր պօէզիա կարող է լինել քան այն, որ իմ արիւնով ցօղուած ամայացած դաշտերի վրայ կրկին առաջանան պէս կըբուսնին շուշանն ու ցօրենը և ազգաց պօէտը կ'ողբերգէ նրանց դիւցաց և սոսաւինչով»։

Եւ նրա դալուկ այտերի վրայ հետզհետէ աւելի և աւելի վառւում էր կարմրութիւնը, քանիքերն աւելի և աւելի զարկում, շնչառութիւնն արագանում

—«Թող ասվէր, թող որ իմ սիրտ
Վրակ ու բոց էրած լինի,
«Թող որ իմ աչքերը գլգլացող սրբ
տոր պղտոր ասվիր լինի»...

Շնորհաւորում եմ ձեր Նոր տարին,
իմ սրտալի պանդուխտ եղբայրներ։

Պանդուխտ
Վարդ։

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՎԱՆՈՒՄ

Մի գարմանք, անչափ չկայ ոչ մի ազգ, ոչ մի ցեղ, ոչ մի ժողովուրդ, որ այսօր այնքան ուրախ լինի, որքան մեր աստղերով Տաճկահայ եղբայրների ջախջախուած մնացորդը՝ մանաւանդ Վանայ մէջ։ Որովհետև դա գուրս պրծաւ պատմութեան մէջ նմանը չտեսնուած մի գարհուրելի, ահ և ահաբեկնամթաթափ թաւալումից։ Ընդհանուր արածութիւն, հրածութիւն, կատաղի և վերջապէս թշուառութեան և անհարեկութեան հեռուից հայածարակ մահուան անթիւ թանկագին զոհեր տալով ճա...

...

այդ օրուան լաւ ուզղութիւն է տալիս,

...սանք վազելով ծովափը զամբիկներ և ձիթենիները էին թափում Բայրընի ցանկի տակ, իսկ ծերունին Մավրօկօրդատօս ծունկ չոքած սուր էր մատուցանում հանճարին, որ այդ օրն այլևս ազգեների հրամանատար չէր, այլ հայրենեաց ազատութեան համար պատրաստուած զինուորների։

22 օր անցած նոյն այդ կղզու վրայ լորդ Բայրընը իր տան մէջ, իր ննջարանից դուրս եկաւ զահլիճը, ուր սպասում էին գնդապետ Ստանհոպ և իր ստիչ բարեկամները և կարդաց նրանց մի ոտանաւոր, որ նրա հանճարաւոր գրչի վերջին արտադրութիւնը եղաւ։

—

72 տարի է անցել այդ օրից և այսօր Յունաստանն ազատ է։

Ս. Հախումեան։

ԿՈՂՊԱԳՁԻՑ ՆԱՄԱԿ

—

Կարանդ, անուան տօն, բարեկենդան։

Պանդուխտին համար չէ կարելի եղանակային բաժանման տարւոյն մէջ՝ անցնել աւելի յարգող ու ցաւագին արպատրաստութեամբ մի համակել օրեր...

...

կանի սկզբներում բոլորովին չապահովուի, ապա նրանց գոյութիւնը նոյնիսկ թաւալանում աշխարհից կըջնջուի։

Արդ՝ եթէ աշխարհը նրանց փրկել չէ կարող, գոնէ թող ազօթէ նրանց համար, ինչպէս և նրանք այսօր, խորխորատի բերան կանգնելով հանդերձ, բարեմաղթում են աշխարհի համար բարի տարի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԱՐՁԱԳԱՆՔ» Ի ՀԵՌԱԳԻՐ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 դեկտ.—Այսօր «Պետերբուրգսկիա Վեդոմոստի» լրագրում հրատարակուեցաւ Հայր Եսայեան Կրօնշտադտեցու ասած հասարակութեան ուղղած խանդավառ ջերմ հրաւէրը։ Ընդ նմին ազդարարում երևելի հայր պարապ յօգուտ Տաճկաստանի աստուացեալ Հայերի, Արժ. Հայրը բուն քրիստոնէական զգացմունքով հրաւիրում է հասարակութեանը հետևել իր օրինակին։ Լրագրի ամբողջ համարը նուիրած է Տաճկաստանի Հայերի տարաբեկի դրութեան և համակրութիւնյարուցանելուն դէպի նրանց թշուառ վիճակը։ Առանձնապէս աչքի է ընկնում Հոլստեինի ապրսի և գործ յօդուածը։

Թղթակցութիւն։

***

Տաճկական Հայաստանից Ռուսիա գաղթած բազմաթիւ հայ գիւղացիները, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, խնդրատուացից են եղել աւերութեան, որ իրանց առտ-հպատակ ընդունեն։...

բար, սիրել հայ ազգը, հայ անձամբ եկեղեցին և Ս. Էջմիածինը։ Երիտասարդ վարդապետը շնորհալի քարոզիչ է. լեզուն գրաւիչ է, խօսում է մեղմ ու հանդարտ, թողած տպաւորութիւնը զօրեղ է։ Ս. պատարագից յետոյ հ. Բենիկն այցելութեան գնաց տեղիս նահանգապետին, որ և իր կողմից նոյն օրը փոխայցելութեան գնաց հ. Բենիկին։ Ծննդեան տօներին հ. Բենիկը մնալու է տեղս։

* * *

«Նովօստի» լրագրին Փարիզից գրում են, որ պ. Ֆուրսը (գերմանացի), որ բնակվում է Էլբա կղզում, գտել է միջոց ելեկտրականութեամբ բուժելու ֆիլոքսերայով վարակուած որթերը։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր.

Ընթերցողը գուցէ կըյիշէ, որ ես «Արձագանքի» № 109-ում գանգատուել եմ Կուկիայ ս. Աստուածածնի եկեղեցու երեցփոխան Աբրահամեանի դէմ, որ նա երկար տարիների ընթացքում հաշիւ չի ներկայացնում կոնսիստորիային։ Իսկ թէ որքան արդիւնք ունի այդ եկեղեցին՝ ես մատնացոյց եմ արել այն հանգամանքի վրայ, որ պ. Տէր-Յարութիւնեանը խնդիր էր տուել կոնսիստորիային առաջարկելով տարեկան 1700 ռ. եկեղեցու շուրջը գտնուող կալուածքը (խանութները) կապալով վերցնելու այն պայմանով, որ եկեղեցու մօտ գտնուող կիսաշէն խանութները շինի իր հաշւով և գալթի ջրի փողն էլ՝ ինչքան էլ որ գործ ածեն, ինքը տայ քաղաքային վարչութեան։ Բայց ինչ կ՚ասէք որ կոնսիստորիան անուղղ նշանակեց և այդ խանութներին տուին տարեկան ոչ թէ 1700 ռ. այլ 2100 ռ. աճուրդին ես ներկայ էի։ Արդ եթէ այդ գումարին հաւաքում միայն խանութների մուտքը, հապա մոմավաճառութիւնից էլ մի հազար մանէթ չի գայ, թողնելով կողմնակի արդիւնքները, մտածեցի ես, և ասացի՝ ո՞ւր են այս փողերը, քանի որ եկեղեցին այնպիսի անշքութեան մէջ է, որ կսկիծ է պատճառում մարդու։

Պատիւ ունիմ յայտնելու որ մինչև այսօր էլ երեցփոխան Աբրահամեանը հաշիւ չի ներկայացնում, իսկ կոնսիստորիան էլ չգիտեմ ինչու անպայման հաշիւ չի պահանջում։

Յարգոյ Խմբագիր, հաւատացէք որ ես մտադիր չեմ թողնելու որ եկեղեցու փողերը, նրա վերջին կոպէկներն անհաշիւ մնան. պահանջում եմ հաշիւ, հաշիւ և հաշիւ։

Եւ մի՛ս են լինելու հաշւատեսներ՝ ինձ նման աշխարհական, հաշւագէտ երիտասարդներ և ոչ թէ ծատանշաններ գրել չիմացող քահանաներ. և ներկայ մէկը՝ լինի նա Արզիեան, թէ Մարկոսեան, յանցաւոր լինի եկեղեցու կալուածին գողանալ, իմ համոզմունքն է, որ նրան պէտք է յանձնել մարմնաւոր իշխանութեան դատաստանին, որպէսզի մեր երեցփոխանները վերջապէս ճանաչեն իրանց պարտականութիւնը։

Յ. Պետրոսեանց։

31-ն դեկտեմբերի 1896 թ.
Թիֆլիզ։

* * *

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.—«Հայոց դերասանական ընկերութեան մի հատուածը՝ պ. Աբելեանի գլխաւորութեամբ Բաթում, Եկատերինոդար, Նախիջևան, Ռոստով և Արմավիր ներկայացումներ տալուց յետոյ հասել է Բագու։ Դերասանական այս խմբի ներկայացումները Բագւում կսկսուին յունվարի 4-ից և կըտևեն երկու ամիս։ Իւրաքանչիւր շաբաթ տեղի կ՚ունենայ երկու ներկայացումն։ Ռեպերտուարը կազմուած է հետևեալ պիեսներից. Ժան-Բօդրի, Ֆրից քաղհամ, Դօկտոր Զոռկման, Սուանկութին, Զէյլոհ, Օթելլօ, Բաղդասար աղբար, Երանից երկրորդ, Սամէլ, Տարտիւֆ, Ասլան բալասի, Փարիզի շրջմոլիկ տղայ, Հըևուհի, Դիմակահանդէս։

Բագուի հայ հասարակութիւնը, որ ամիսներով հայերէն ներկայացումների երես չի տեսնում, անշուշտ պարտք կըհամարի խրախուսել դերասանական խմբին, որով և իրան մի փոքր թարմացնի»։

* * *

ՇՈՒՇԱՅԻՑ պ. Մխիթարիչը մեզ գրում է, «Սիրապակ-շէն» կոչուած կալուածի խնդիրը, որ երկար տարիներ մեր հասարակութեան համար կռուածաղիկ էր եղած, գրեթէ վերջացած է։ Գիւղացիք համաձայնել սեփական հող ունենալու առաւելութիւնը, պէտք եղած գումարը պարտքից մինչև ունեորը ժողովեցին, որ վճարեն պ. Ս. Պառաւեանցին։

Պ. Մխիթարիչը խնդրում է աւելացնել որ պ. Ս. Պառաւեանցի մասին իր թղթակցութիւնների մէջ արած ենթադրութիւնները չարդարացան, ուստի յետ է վերցնում նրանց։

* * *

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ ՆՈՒԽՈՒՄ

